

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ՆԱԶԱՐՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ ՌՈՔԵՐՏԻ

### ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋՆԵՐՈՒՄ

ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա»  
(ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ մանկավարժական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2013

Ատենախոսության թեման հաստատվել է ֆիզիկական կուլտուրայի  
հայկական պետական ինստիտուտում

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝

մանկավարժական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր Ֆ. Գ. Ղազարյան

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍՆԵՐ՝

մանկավարժական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր Լ. Ս. Ներսիսյան

մանկավարժական գիտությունների  
թեկնածու, դոցենտ Բ. Լ. Երիցյան

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՊՈՒԹՅՈՒՆ՝

Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան  
պետական մանկավարժական  
ինստիտուտ

Պաշտպանությունը կկայանա 2013թ. հունիսի 27-ին, ժամը 14:00-ին,  
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական  
համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈՂ-ի  
«Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան  
հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. մայիսի 23-ին

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական  
գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Վ.Ավագյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Արդի ժամանակաշրջանում, բարձրագույն և միջին մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումների հետ, փոփոխվում է նաև տարբեր բնագավառների մասնագետների պատրաստման բովանդակությունը: Սովորողների ընտրած մասնագիտական գործունեության և նրա առանձին աշխատանքի տեսակների առարկայական պատրաստումը ներկայումս դարձել է ֆիզիկական դաստիարակության, կրթության և առողջապահության ոլորտի աշխատակիցների մասնագետների խիստ ուշադրության առարկան: Ըստ այդմ հատուկ նշանակություն է ստանում տարբեր մասնագիտական որակավորում և մասնագիտացում ստացող ապագա մասնագետների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստությունը (ՊԿՖՊ), որի ներգործությունը սերտորեն կապված է որակավորման, մասնագիտական ընդունակությունների և հմտությունների զարգացման, անձի սոցիալական որակների հետ: Դրա հետ մեկտեղ աշխատանքային գործունեությունը պահանջում է ընտրած մասնագիտությանը համապատասխան հատուկ ֆիզիկական պատրաստվածություն: Դրանով է որոշվում պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության սոցիալ-տնտեսական կարևոր նշանակությունը և նրա հիմնախնդիրների հետազոտումները:

Մասնագիտական ուղղվածության ֆիզիկական դաստիարակության հիմքում ընկած է նրա ընդհանուր զարգացնող և առողջարար ներգործությունը: Սակայն աշխատանքի յուրահատկության հետ չկապված ֆիզիկական պատրաստությունը կարող է ոչ թե դրական ազդեցություն ունենալ մասնագիտության տիրապետման հարցում, այլ դժվարացնել մասնագիտական որակների և հմտությունների ձևավորումը (Յ. Ս. Մախուս, 1986; Ս. Ս. Коровин, 1997; Ե. Ա. Еручан, 2004; Ս. Ա. Հակոբյան, 2006 և ուրիշներ): Ուստի ֆիզիկական դաստիարակության դերը՝ որպես պարտադիր դասավանդման առարկա, նկատելիորեն բարձրանում է և դառնում մասնագիտական գործունեությանը նպաստող ֆիզիկական պատրաստության համակարգ: Սրանից կարելի է եզրակացնել, որ մասնագիտության արդյունավետ տիրապետման համար անհրաժեշտ են գիտականորեն հիմնավորված համակարգ և պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկա:

Կան բազմաթիվ հետազոտություններ՝ տարբեր բնագավառի միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության բովանդակության մշակման վերաբերյալ (Յ. Ա. Кабаков և համահեղ., 1980, 1989; Ս. Н. Богданов և համահեղ., 1995; Յ. Ս. Ильинич, 2005; Ա. Յ. Николаев և համահեղ., 2005 և ուրիշներ):

Սակայն, չնայած պրոֆեսիոնալ-կիրառական ուղղվածություն ունեցող ֆիզիկական դաստիարակության խնդրի խիստ ուշադրությանը,

մինչև այսօր առանձին խումբ մասնագիտություններ մնում են չհետազոտված: Դրանց թվին են պատկանում նաև միջին բժշկական անձնակազմի մասնագիտությունները:

Բազմաթիվ գրական աղբյուրների վերլուծությունից հետո մեզ չհաջողվեց հայտնաբերել աշխատանքներ՝ կապված միջին բժշկական անձնակազմի պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության բովանդակության և մեթոդիկայի հետ, թեև կան մի շարք հետազոտություններ, որտեղ այդ հարցերը դիտարկված են բժիշկների առանձին կատեգորիաների համար՝ վիրաբույժներ, դեղագործներ, թերապևտներ (Ե. Մ. Գյոս Կոստոմ., 1981, 1983, 1985, 1988): Մյուս կողմից՝ այսօր մանկավարժական և բժշկական դպրոցի առջև դրված հիմնախնդիրը առողջապահության մասնագետների պատրաստության որակի բարձրացումն է:

Պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության հիմնախնդրում, ֆիզիկական դաստիարակության համակարգի կատարելագործման հետ մեկտեղ, մանկավարժական գիտությունում դեռևս կան մի շարք չլուծված հարցեր: Առ այսօր քիչ են մշակված կիրառական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման տեսամեթոդական հարցերը, որոնք նպաստում են ապագա միջին բժշկական անձնակազմի աշխատակիցների մասնագիտական արդյունավետ գործունեությանը:

Ուստի ապագա բուժբույրների, մանկաբարձուհիների, դեղագործների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկայի հիմնավորումը խիստ կարևոր խնդիր է և ընդգծում է տվյալ հետազոտության արդիականությունը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊՍՏԱԿԸ:** Բժշկական քոլեջներում ֆիզիկական դաստիարակության միջոցների ուղղորդված կիրառմամբ ուսումնամանկավարժական գործընթացի կատարելագործումը՝ տվյալ բնագավառի մասնագետներին մախապատրաստելիս:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ:** Բժշկական քոլեջի ուսանողների ֆիզիկական դաստիարակությունը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՈՒՐԿԱՆ:** Մասնագիտական կարևոր շարժողական ընդունակությունների հետազոտումը և նրանց նպատակաուղղված կիրառումը՝ հատուկ մշակված միջոցներով և մեթոդներով:

**ԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԿԱԾԸ:** Ենթադրվում էր, որ ուսումնամանկավարժական գործընթացի անցկացումը պրոֆեսիոնալ-կիրառական ուղղվածության հատուկ ծրագրով կբարելավի ուսանողների՝ միջին բժշկական անձնակազմի ապագա աշխատակիցների շարժողական պատրաստվածությունը, կընդլայնի օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունները, կբարձրացնի մասնագիտական կարևոր որակների մակարդակը և աշխատունակությունը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ:** Ներկայացվող աշխատանքի նպատակը նախատեսում էր որոշակի խնդիրների լուծում:

- բացահայտել ուսանողների առավել կարևոր շարժողական ընդունակությունները,
- մշակել ֆիզիկական վիճակի գնահատման մոդելային սանդղակներ,
- մշակել և հիմնավորել ուսանողների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկան,
- մշակել գործնական առաջարկություններ մասնագետների համար:

Մասնակի խնդիրները նկարագրված են ատենախոսության համապատասխան գլուխներում:

1. Անցկացնել բժշկական քոլեջի ուսանողուհիների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության մոնիթորինգ:
2. Ուսումնասիրել մասնագետների կարծիքները և պատկերացումներն ապագա միջին բժշկական անձնակազմի աշխատակիցների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության էության և նշանակության մասին:
3. Ընտրել պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության միջոցներ՝ ուղղված բժշկական քոլեջի բուժքույրի, մանկաբարձուհու և դեղագործուհու մասնագիտացում ստացող ուսանողուհիների շարժողական պատրաստվածության բարձրացմանը:
4. Մշակել և հիմնավորել պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության միջոցների կիրառման մեթոդիկան բժշկական քոլեջում ֆիզիկական դաստիարակության պարապմունքների ընթացքում:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ:** Առաջ քաշված խնդիրների իրագործման համար ընտրվել են հետազոտությանը համապատասխան համարժեք մեթոդներ.

- գրական աղբյուրների ուսումնասիրություն, վերլուծություն և ընդհանրացում,
- սոցիոլոգիական հարցում,
- մարդաչափություն,
- մանկավարժական դիտարկում և շարժողական ընդունակությունների թեստավորում,
- հոգեֆիզիկական մեթոդներ,
- բժշկական վերահսկում և աշխատունակության գնահատում,
- փաստագրող և ձևավորող մանկավարժական գիտափորձ,
- մաթեմատիկական վիճակագրության մեթոդներ.

Յուրաքանչյուր մեթոդի նկարագրությունը տրված է ատենախոսության համապատասխան գլխում:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՓՈՒԼԵՐԸ և ՔԱՆԱԿԱԿԱՑՄԸ:**

Հետազոտությունն անցկացվել է 3 փուլերով: Առաջին փուլ՝ որոնողական-նախապատրաստական, վերլուծվել է հիմնախնդրի մանկավարժական,

բժշկական և գիտամեթոդական գրականությունը, որոշվել են հետազոտության նպատակը և խնդիրները, կառուցվել է ելակետային գիտական վարկածը, իրագործվել է հետազոտության մեթոդների ընտրությունը:

Երկրորդ փուլ՝ տեսական-նախագծային, որոշվել են հետազոտության տեսամեթոդական հիմքերը, վերջնականապես ճշտվել է ելակետային գիտական վարկածը, անցկացվել է մանկավարժական գիտափորձ, կատարվել է հետազոտության ընթացքում ստացված արդյունքների փուլային վերլուծություն:

Երրորդ փուլ՝ գիտափորձարարական-ընդհանրացնող՝ կատարվել են պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության միջոցների ընտրության ճշտումներ, իրագործվել է առաջ քաշված վարկածի գիտափորձարարական և մշակված ծրագրի արդյունավետության ստուգում, հրապարակվել են հետազոտության նյութերը: Ինչպես նաև ձևակերպվել և խմբագրվել է ատենախոսությունը:

Սոցիոլոգիական հարցման ենթարկվել են 222 մասնագետներ՝ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներ, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասախոսներ և բժշկական հաստատությունների աշխատակիցներ: Հետազոտության համար փորձարարական հիմքը եղել է Վանաձորի պետական բժշկական քոլեջը: Զանգվածային հետազոտությանը մասնակցել են 395 ուսանողներ, իսկ ձևավորող մանկավարժական գիտափորձին՝ 235-ը:

**ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:** Հիմնավորված է նրանով, որ մեր հանրապետությունում առաջին անգամ հատուկ հետազոտության առարկա են դարձել միջին բժշկական անձնակազմի ապագա մասնագետների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության կատարելագործման տեսամեթոդական հարցերը: Հետազոտությունների արդյունքում հաջողվեց՝

- առանձնացնել միջին բժշկական անձնակազմի աշխատողների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության հիմնական բովանդակությունը,
- ձևակերպել կոնկրետ մասնագիտության ուսուցման գործընթացում այդ պատրաստության նպատակային դիրքորոշումները, խնդիրները և բովանդակությունը,
- ցույց տալ, որ պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստությունը որպես մասնագիտացված մանկավարժական գործընթաց, պետք է կառուցվի ընդհանուր ֆիզիկական պատրաստության հիմամբ և միասնությամբ, որը ստեղծում է անհրաժեշտ ֆունկցիոնալ բազա միջին բժշկական անձնակազմի մասնագետների արդյունավետ մասնագիտական գործունեության համար,
- որոշվել է պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության համապատասխան միջոցների ընտրման գործնական նպատակահարմարությունը՝ ըստ նրա հիմնական մանկավար-

ժական խնդիրների: Միջին բժշկական անձնակազմի աշխատակիցների երեք խմբերի համար որոշվել են մասնագիտական գործունեությանը նպաստող մարզածևերը:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Հետազոտության արդյունքները լրացնում են ապագա միջին բժշկական անձնակազմի աշխատակիցների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության բնագավառի գիտելիքները: Աշխատանքում նշված են բժշկական աշխատակիցների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության տեսական նախադրյալները: Նշված բժշկական կատեգորիաների աշխատակիցների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության արդյունավետ մեթոդիկայի մշակումը և ներդրումը բժշկական քոլեջներում ֆիզիկական դաստիարակության և աշխատանքային մասնագիտական ուսուցման զարգացման և ղեկավարման փոխկապակցվածության էական փուլն է:

### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

- Ապագա մասնագետների պրեֆեսիոնալ կարևոր որակների և ընդունակությունների զարգացման մակարդակի ուսումնասիրման հիման վրա բժշկական քոլեջի ուսանողների ֆիզիկական դաստիարակության կազկակերպում և մեթոդական գործընթացի ապահովում,
- Միջին բժշկական անձնակազմի մասնագետների՝ բուժքույրերի, մանկաբարձուհիների, դեղագործների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստվածության վիճակի հսկման նորմատիվների մշակում,
- Բժշկական քոլեջի ուսանողների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության բարելավման նպատակով, ի լրացումն ֆիզիկական դաստիարակության ծրագրի, գիտականորեն հիմնավորված մեթոդական երաշխավորագրերի առաջարկում:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ:** Պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության ուսումնական նյութի ընտրության և կառուցվածքի դիդակտիկ հիմնավորման խնդիրների լուծման ընթացքում հեղինակը ղեկավարվել է մանկավարժական գիտության ընդհանուր դիդակտիկայի հիմնադրույթներով (Յ. Կ. Բաբանսկու, 1983; Ի. Ս. Սլոնսկու, 1996; Բ. Ա. Տլաստենի, 1998; Կ. Վ. Բորդովսկայ, Ա. Ա. Քեան, 2000; Ս. Պ. Սանուկյան, 2002 և ուրիշներ): Պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության միջոցներ կիրառելի դիդակտիկական նշանակության չափանիշներն են ընդհանուր դիդակտիկական սկզբունքների դրույթները՝ մատչելիությունը, համակարգվածությունը, անհատականացումը, ուսումնական պահանջների աստիճանական բարձրացումը, ուսուցման կապը աշխատանքային պրակտիկայի հետ: Ելակետային դրույթներից են նաև ֆիզիկական կուլտուրայի պրոֆեսիոնալ-կիրառական ձևերի տեսությանը և մեթոդիկային վերաբերող

աշխատանքները(В.И.Ильич, 1978; Б.И.Загорский, 1986; Ф.Г.Казарян, 1984; В. П. Полянский, 1999):

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ:** Հետազոտության հիմնական դրույթները և արդյունքները քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի և Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի համապատասխան ամբիոնների նիստերում: Հիմնախնդրի վերաբերյալ տպագրվել են չորս գիտական հոդված և մեթոդական ձեռնարկ: Աշխատանքում առկա են երկու ներդրման ակտ՝ մանկավարժական պրակտիկայում գիտական հետազոտության արդյունքների ներդրման մասին:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿՈՐԿԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԵՆ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆՆ** ապահովված են ելակետային մեթոդաբանական դիրքորոշումներով, մեթոդների և եղանակների տարբերակային համալիրների ընտրությամբ և կիրառմամբ, որոնք համապատասխան են հետազոտության նպատակին և խնդիրներին, զմահատման տեսանկյունից մեթոդների ընտրության հիմնավորմամբ, գիտափորձարարական աշխատանքում հեղինակի անձնական մասնակցությամբ: Անցկացված քանակական և որակական վերլուծությունը, փորձարարական տվյալների կիճակագրությունը ապացուցում են եզրակացությունների անկողմնակալությունը և օրինաչափականությունը, բացահայտված կապերի և օրինաչափությունների կայուն բնույթը:

## **ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

1. Պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստականության տեխնոլոգիան որպես բժշկական քոլեջների ուսանողների ֆիզիկական դաստիարակության գործընթացի կազմակերպման մի բաժին, կազմված է երկու հիմնական բաժիններից՝ տեսական և գործնական:
2. Պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության միջոցների և մեթոդների կիրառումը դրական ազդեցություն է թողնում բժշկական քոլեջի ուսանողների շարժողական պատրաստվածության, մասնագիտական կարևոր որակների մշակման, օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների բարձրացման վրա:
3. Բժշկական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող ուսանողուհիների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մակարդակի ապահովումը, որի համար անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել մատների և դաստակների ճարպկությանը, շարժումների ճշգրտությանը, մկանային ճիգերի տարբերակմանը, դիմացկունության տարբեր դրսևորումներին, ինչպես նաև շոշափողական զգայունության, ուշադրության կենտրոնացման, տրեմորի, տետղական և հուզական լարվածության կարողությունների զարգացմանը:



**ԱՏԵՆԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՑՎԱԾՔԸ և ԾՎԱԿԱԸ:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից: Այն շարադրված է համակարգչային տեքստի 138 էջերում: Աշխատանքը պարունակում է 23 աղյուսակ, 2 նկար, 177 անուն օգտագործված գրականության ցանկ, 5 հավելված:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ընդգծված է աշխատանքի նպատակը, սահմանված են հետազոտության վարկածը, օբյեկտը, առարկան, ներկայցված են հետազոտության խնդիրները, մեթոդները: Բացահայտված է գիտական նորույթը, նշված են հատազոտության տեսական ու գործնական նշանակությունները, պաշտպանությանը ներկայցվող հիմնական դրույթները:

**ԱՈՍՁԻՆ ՂԼԽՈՒՄ** «Հիմնախնդրի վիճակ», դիտարկվում են պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության առաջացման, նրա էության և պրոֆեսիագրի մասին հասկացություն հարցերը:

Այս գլխում ներկայացված փաստագրական նյութը հիմք է տալիս հաստատելու, որ ֆիզիկական կուլտուրայի ծագման հիմքում որպես սոցիալական ֆենոմեն, կարևոր է նրա կիրառական լինելը: Ֆիզիկական դաստիարակության միջոցների ի սկզբանե կիրառական լինելը, որը դիտարկվել է մարդկային հասարակության զարգացման բոլոր փուլերում, անշուշտ դրսևորվում է նաև ներկա օրերում (Վ. Մ. Мамсеев, 1996; Գ. Д. Иванов, 1998; В. П. Полянскун, 1999; И. Е. Коновалов. 2008 և ուրիշներ): Ցույց է տրված, որ տարբեր բնագավառների ապագա մասնագետների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստությունը, լինելով ուսանողների ֆիզիկական դաստիարակության առանձին և ինքնուրույն դասընթաց, այն կապող օղակն է, որը միացնում է հոգեշարժիչ պատրաստությունը ապագա մասնագիտության գործունեությանը (Р.Т. Раевскун, 1985; Р.С. Сафун, 1978; В.А. Кабачков, 1969; М. В. Стефановскун, 2007 և ուրիշներ): Հենց պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության միջոցով է «ֆիզիկական դաստիարակություն» ուսումնական առարկան բուհերում իրականացնում ուսումնական գործընթացի կապը արտադրության հետ: Ընդհանրացնելով գրականության աղբյուրներից ստացված տեղեկությունները պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության անհրաժեշտության և նշանակության մասին կրթական տարբեր օղակների կրթության և դաստիարակության համակարգում կարևորում ենք նշել, որ մասնագետների տեսադաշտից դուրս են մնում հատկապես միջին բժշկական անձնակազմի ապագա աշխատողների՝ բուժքույրերի, մանկաբարձուհիների, դեղագործների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության առանձնահատկությունները: Մենք համամիտ ենք այն հեղինակների հետ, որոնք պնդում են, որ պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստությունը անհրաժեշտ է նաև այն մասնագիտու-

յունների պրոֆեսիոնալ խմբերի համար, որտեղ չեն պահանջվում նկանային մեծ ճիգերի դրսևորում (E. П. Гук , 1983; Н. А. Рыбачук, 2002 և ուրիշներ): Մասնագիտությունների այդ խմբին են պատկանում նաև միջին բժշկական անձնակազմի աշխատակիցները՝ բուժքույրեր, մանկաբարձուհիներ, դեղագործներ, որտեղ, գրականության ուսումնասիրության արդյունքի և սեփական մանկավարժական դիտարկումների հիման վրա ինչպես մենք բացահայտել ենք, կարևոր շարժողական ընդունակություններն են շարժումների ճշգրտությունը և կոորդինացիան, հոգեշարժիչ որակներից են՝ ուշադրության կենտրոնացումը, շոշափողական զգայունությունը: Ատենախոսության հաջորդ գլուխներում այս հարցերը դարձան հատուկ հետազոտության առարկա:

**ԵՐԿՐՈՐԴ ՂԼՆՈՒՄ** «Միջին բժշկական անձնակազմի ապագա մասնագետների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության վիճակը», վերլուծվել են բժշկական քոլեջի 16-19 տարեկան 395 ուսանողուհիների հետազոտության արդյունքները: Դետազոտվել են ֆիզիկական զարգացման երեք հատկանիշներ՝ մարմնի հասակ, քաշ, կրծքավանդակի շրջագիծ և չորս շարժողական պատրաստվածության ցուցանիշներ՝ արագաշարժություն, դիմացկունություն, արագաուժային ընդունակություններ և ուժային դիմացկունություն: Արդյունքները մշակվել են վիճակագրորեն: Աղյուսակ1-ից երևում է, որ բոլոր հիմնական հատկանիշները տարիքի հետ աճում են: Սակայն զարգացման տվյալ տեղաշարժերը այս տարիքային ժամանակաշրջանում այդքան էլ էական չեն: Այսպես՝ չորս տարվա ընթացքում մարմնի հասակի ցուցանիշները աճում են ընդամենը 0,3սմ, մարմնի քաշը՝ 0,8կգ, իսկ կրծքավանդակի շրջագիծը՝ 0,8սմ: Դա վկայում է այն մասին, որ աղջիկների մորֆոլոգիական հատկանիշները ուսումնասիրության ընթացքում չեն տարբերվում: Ակնհայտ է, որ սա նույնպես թույլ կտա կատարել որոշակի ընդհանրացումներ: Մյուս կողմից՝ ուսանողուհիների շարժողական պատրաստվածության մակարդակը բնութագրող առանձին ցուցանիշները ավելի նկատելի են տարբերվում (աղ. 1):

Այստեղից երևում է, որ աղջիկների արագաշարժության ընդունակությունները՝ 20մ ընթացքից վազքի արդյունքներով, 16-19 տարեկան ժամանակահատվածում բարելավվում են 0,19 վրկ: Գրեթե նույնատիպ պատկերն է դիտվել նաև արագաուժային ընդունակությունների ցուցանիշներում՝ տեղից հեռացատկի արդյունքներով: Ուժային դիմացկունության արդյունքները՝ կքանիստներ տեղում, բարելավվել են 11 անգամ, իսկ ընդհանուր դիմացկունության արդյունքները՝ վազք 500մ, 11.4 վրկ-ով: Սրա հետ մեկտեղ առավել նկատելի տեղաշարժեր են կատարվել 16-17 տարեկանների մոտ:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ 16-19 տարեկան ուսանող աղջիկների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության ցուցանիշների դինամիկայում էական նշանակություն ունի տարիքային գործոնը: Միևնույն ժամանակ մարմնական և շարժողական զարգացման ցուցանիշները այստեղ միանման և միաուղղված չեն փոփոխվում: Այսպես՝

թեև զնմվող տարիքային հատվածում ֆիզիկական զարգացման ցուցանիշները (մարմնի հասակը, քաշը, կրծքավանդակի շրջագիծը) փոփոխվում են, բայց և այնպես աննշան են աճում, սակայն շարժողական թեստերի արդյունքները (ուժ, արագաշարժություն, դիմացկունություն) ավելի նկատելի են բարելավվում:

**Սղյուսակ 1**

**Ուսանողուհիների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության ցուցանիշները**

Ֆիզիկական զարգացում																
Տարիք	Մարմնի հասակ, սմ				Մարմնի քաշ, կգ				Կրծքավանդակի շրջագիծ, սմ							
	$\bar{x} \pm m$	$\sigma$	$t$	$p, \%$	$\bar{x} \pm m$	$\sigma$	$t$	$p, \%$	$\bar{x} \pm m$	$\sigma$	$t$	$p, \%$				
16	159.08 ± 0.96	4.70	-----	-----	56.083 ± 1.25	8.07	-----	-----	86.83 ± 1.25	6.14	-----	-----				
17	159.25 ± 0.47	5.52	0.16	< 5	56.261 ± 0.67	7.91	0.12	< 5	87.11 ± 0.45	5.35	0.21	< 5				
18	159.32 ± 0.43	5.51	0.11	< 5	56.498 ± 0.53	6.74	0.28	< 5	87.3 ± 0.44	5.61	0.3	< 5				
19	159.3 ± 0.6	4.98	0.03	< 5	56.79 ± 0.92	7.56	0.28	< 5	87.63 ± 0.65	5.4	0.42	< 5				
Շարժողական պատրաստվածություն																
Տարիք	20մ ընթացքից/վրկ				Չեռացատկ տեղից, սմ				Կքանիստ, քանակ				500 մ, ր			
	$\bar{x} \pm m$	$\sigma$	$t$	$p, \%$	$\bar{x} \pm m$	$\sigma$	$t$	$p, \%$	$\bar{x} \pm m$	$\sigma$	$t$	$p, \%$	$\bar{x} \pm m$	$\sigma$	$t$	$p, \%$
16	3.80 ± 0.07	0.37	-----	-----	147.87 ± 3.48	17.03	-----	-----	66.87 ± 4.4	19.84	-----	-----	2.41.2 ± 2.24	11	-----	-----
17	3.70 ± 0.03	0.34	1.31	< 5	155.84 ± 1.6	18.89	2.08	> 5	77.18 ± 2.25	26.58	2.23	> 5	2.37.1 ± 1.14	13.48	1.63	< 5
18	3.64 ± 0.03	0.32	1.43	< 5	157.66 ± 1.38	17.65	0.86	< 5	78.03 ± 2.19	28.08	0.27	< 5	2.33.1 ± 0.72	9.28	2.98	> 1
19	3.61 ± 0.04	0.34	0.6	< 5	158.15 ± 1.6	13.19	0.23	< 5	77.79 ± 2.5	20.66	0.015	< 5	2.31.7 ± 1.3	10.93	0.92	< 5

Հիմնվելով այս տվյալների վրա՝ մշակվեցին մոդելային սանդղակներ, որոնցով կարելի է որոշել ուսանողուհիների պատրաստվածության մակարդակը, անհատականացնել բեռնվածությունը և ֆիզիկական դաստիարակության գործընթացում համապատասխան փոփոխություններ կատարել:

**ԵՐՐՈՐԴ ՂԼՆՈՒՄ** «Պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկայի մշակումը և փորձարկումը բժշկական քոլեջներում», ներկայացված և վելուծված են միջին բժշկական անձնակազմի աշխատակիցների պրոֆեսիագրի տվյալները և բժշկական քոլեջներում ակադեմիական պարապմունքների համակարգում պրո-

Ֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկայի փորձարկման արդյունքները:

Սոցիոլոգիական հարցման արդյունքներով մենք որոշեցինք երկու խումբ հարցվողների ֆիզկուլտուրայի ուսուցիչների և քոլեջների դասավանդողների, միջին բժշկական անձնակազմի աշխատակիցների, կարծիքները սովորողների ֆիզիկական դաստիարակության համակարգում պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության տեղի դերի մասին: Այդ նպատակով մշակվել էին հատուկ հարցաթերթիկներ: Այսպիսով՝ հետազոտության արդյունքում հայտնաբերվել են մի շարք գործոններ, որոնք բնութագրում են միջին բժշկական ուսումնական հաստատությունների ապագա մասնագետների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության վիճակը: Ապացուցված է, որ նրանց մոտ առաջին հերթին պետք է մշակել ձեռքերի շարժումների ճշգրտությունը և կոորդինացիան, մկանային շարժումների տարբերակման կարողությունը, ստորին վերջույթների դիմացկունությունը, ուշադրության կենտրոնացման ունակությունը, շարժողական հիշողությունը, բացասական հույզերի ղեկավարման կարողությունը և կամային որակները:

Միջին բժշկական ուսումնական հաստատության ֆիզիկական դաստիարակության գործընթացում հայտնաբերված գործոնները պետք է դառնան որոշիչ ապագա բուժքույրերի, մանկաբարձուհիների, դեղագործների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության միջոցների համապատասխան ընտրությունում (աղ. 2):

Միջին բժշկական անձնակազմի աշխատակիցների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկայի մշակումը մենք իրագործել ենք հաշվի առնելով նրա հիմնական նպատակը՝ աջակցել արդյունավետ մասնագիտական կրթությանը: Դրա համար էլ, ի լրումն բժշկական քոլեջի ֆիզիկական դաստիարակության ծրագրի, մշակվել է պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության առանձին բաժին, որը իր մեջ ներառում է ինչպես տեսական, այնպես էլ գործնական պարապմունքներ:

Ֆիզիկական դաստիարակության միջոցների ընտրության ժամանակ մենք հիմնվել ենք հատուկ մասնագիտական աշխատանքային հնարքների և գործողությունների յուրահատուկ առանձնահատկությունների վրա: Մշակվել էին 9 համապատասխան համալիրներ՝ տեղայնացված ֆիզիկական վարժություններով և շարժախաղերով: Բժշկական քոլեջի ուսանողների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեր կողմից մշակված մեթոդիկայի փորձարկմանը մասնակցել են 235 ուսանողուհիներ, որոնք վիճակահանությանը ձևավորել են երեք փորձարարական և երեք ստուգողական խմբեր:

Փորձարարական և ստուգողական խմբերում ֆիզիկական դաստիարակության դասերն անց են կացվել ուսումնական դասացուցակով և ունեցել են դասի միևնույն կառուցվածքը: Բեռնվածության ծավալը մեր ծրագրում կազմել է 60:40, այսինքն՝ 60 տոկոս ընդհանուր ֆիզիկական պատրաստություն, 40 տոկոս՝ պրոֆեսիոնալ-կիրառական: Ստուգողական

խմբերում պարապմունքներն անցկացվել են բժշկական քոլեջների գործող ծրագրի համաձայն:

**Աղյուսակ 2**


**Բժշկական աշխատակիցների մասնագիտական կարևոր շարժողական ընդունակությունները և հոգեշարժիչ որակները**

Ընդունակությունները և որակները	Բուժ-քույրեր	Մանկա-բարձներ	Դեղագործներ	Ատամնատեխնիկներ
<b>Շարժողական ընդունակություններ</b>				
Շարժումների ճշգրտություն և կոորդինացիա				+
Մատների և դաստակների ճարպկություն	+		+	+
Մկանային ճիգերի տարբերակում	+		+	+
Վերին վերջույթների դիմացկունություն		+	+	+
Իրանի և ստորին վերջույթների ստատիկ դիմացկունություն			+	+
Ուժային դիմացկունություն	+	+		
<b>Հոգեշարժիչ որակներ</b>				
Ուշադրության կենտրոնացում և կայունություն	+	+	+	+
Շոշափողական զգայունություն			+	+
Դինամիկ և ստատիկ տրեմոր			+	+
Շարժողական հիշողություն	+	+	+	+
Տեսողական լարվածություն	+	+	+	+
Հուզական լարվածություն		+		

Մինչև մանկավարժական ներգործությունների միջոցով մասնագիտական կարևոր շարժողական ընդունակությունների և հոգեշարժիչ որակների դաստիարակումը ստուգողական և փորձարարական խմբերի միջև անց էր կացվել համեմատական վիճակագրական գնահատում: Տարբերությունները հավաստի չէին, որոնք հնարավորություն տվեցին համապատասխան եզրակացություններ կատարել:

Մանկավարժական գիտափորձի ընթացքում անցկացվել են պրոֆեսիոնալ-կիրառական ուղղվածության 123 պարապմունքներ:

Մանկավարժական գիտափորձի ընթացքում ֆիզիկական զարգացման հատկանիշները (քաշը, հասակը, թոքերի կենսական տարողությունը և կրծքավանդակի շրջագիծը) երկու խմբերում էլ եապես չեն փոխվել: Տարբերությունները բոլոր խմբերի միջև այստեղ հավաստի չեն ( $P < 5\%$ ): Միևնույն ժամանակ փոքր-ինչ ավելի հավաստիորեն բարելավվել են թոքերի կենսական տարողության ցուցանիշները: Ակնհայտ է, որ երկարատև վազքային վարժությունները և շարժական խաղերը, որոնք կիրառվել են մանկավարժական գիտափորձում, նպաստել են բժշկական քլեջի ուսանողուհիների շնչառական համակարգի ֆունկցիայի ակտիվացմանը (նկ. 1):




**Նկար 1. Մանկավարժական գիտափորձի վերջում բժշկական քլեջի ուսանողուհիների ֆիզիկական զարգացման ցուցանիշների տեղաշարժերը**

Հաստատվեց, որ պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության համակարգի իննամսյա կիրառումը նկատելի լավացել են ուսանողուհիների բոլոր շարժողական ընդունակությունների արդյունքները, սակայն ավելի հավաստի փորձարարական խմբերում (նկ. 2):

Այստեղից երևում է, որ երկու անգամ աճել են ուժային ընդունակությունները և ստատիկ հավասարակշռության պահպանման կարողությունները: Կիրառված հատուկ վարժությունների համակարգը նպաստեց ձեռքերի և մատների մանր մոտորիկայի կատարելագործմանը, որը շատ կարևոր է բուժքույրերի, մանկաբարձուհիների և դեղագործների մասնագիտական շարժողական գործողություններում: Վերջինս իր արտացոլումը գտավ ուսանողուհիների մկանային ճիգերի տարբերակման ունակության ցուցանիշներում: Այդ ցուցանիշները երկու և ավելի անգամ ավելի էին բարելավվել փորձարարական խմբերի ուսանողուհիների մոտ: Հաշվի առնելով միջին բժշկական անձնակազմի աշխատակիցների մասնագիտական աշխատանքի բնույթը՝ մենք հետազոտեցինք նաև նրանց

ուժային դինացկունության հնարավորությունները՝ առավելագույն քանակով կքանիստներ և սեփական քաշի 30% ծանրությանը կքանիստներ: Այստեղ նույնպես փորձարական խմբերի ուսանողուհիների ցուցանիշները երեք անգամ ավելի էին և ունեին հավաստիության բարձր մակարդակ  $P > 1\% > 0.1\%$  (նկ. 2): Նմանատիպ տեղաշարժեր էին բացահայտվել նաև արագաշարժության, արագաուժային ընդունակութունների, ընդհանուր դինացկունության ցուցանիշներում:




**Նկար 2. Մանկավարժական գիտափորձի վերջում բժշկական քոլեջի ուսանողուհիների շարժողական պատրաստվածության ցուցանիշների տեղաշարժերը**

Հատուկ հետաքրքրություն էր առաջացնում մանկավարժական գիտափորձի ընթացքում միջին բժշկական անձնակազմի աշխատանքային զործունեությանը առավել բնորոշ հոգեշարժիչ որակների ցուցանիշների փոփոխությունները: Հետազոտության գաղափարից և շահերից ելնելով՝ շատ կարևոր էր, որ մանկավարժական ներգործությունների ընթացքում պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության ապահովման համար փորձարարական խմբերում երկու և ավելի անգամ բարելավվել էին տրենորի, շարժումների հաճախականության և ուշադրության կենտրոնացման կարողության ցուցանիշները (նկ. 3):

Այս բոլոր դրական տեղաշարժերը իրենց արտացոլումը գտան նաև ուսանողուհիների աշխատունակության ցուցանիշներում: Փորձարարական խմբերում այս ցուցանիշները նույնպես երկու անգամ ավելի էին (նկ. 3): Պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության առավելությունների մասին էին վկայում նաև մասնագիտական առարկաների քննությունների արդյունքները: Քոլեջի այն ուսանողուհիները, որոնք անցել էին պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաս-

տության դասընթաց, ավելի արդյունավետ էին հանձնել մասնագիտական առարկաների քննությունները: Այսպիսով՝ մանկավարժական գիտափորձի արդյունքում մեզ հաջողվեց ցույց տալ, որ պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մշակված ու փորձարկված մեթոդիկան ոչ միայն ուղղորդված բարձրացնում է ապագա մասնագետների շարժողական հմարավորությունները, այլև բարելավում է օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակը և աշխատունակությունը:



**Նկար 3. Մանկավարժական գիտափորձի ընթացքում հոգեշարժիչ որակների և աշխատունակության ցուցանիշների տեղաշարժերը**

Չէ՞ որ, որքան հարուստ է և լայն շարժողական փորձը, որքան կատարյալ է կորդինացիան, շարժումների ճշգրտությունը և ճարակությունը, մկանային ճիգերի տարբերակման կարողությունը, այնքան արդյունավետ է բուժքույրերի, մանկաբարձուհիների և դեղագործների մասնագիտությունների հետ կապված տարբեր շարժողական հմտությունների ձևավորման գործընթացը:

Մենք կրկին հանդգնեցինք, որ պրոֆեսիոնալ կիրառական ֆիզիկական պատրաստության հիմքը պետք է կազմեն հատուկ ընտրված և տեղայնացված ֆիզիկական վարժությունները, որոնք նպաստում են այն կիրառական հմտությունների ձևավորմանը, որոնք համապատասխանում են սովյալ մասնագիտության մարդու պիտանելիության չափանիշներին:

Սինոույն ժամանակ մանկավարժական գիտափորձի ընթացքում ցույց է տրված պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության և ընդհանուր ֆիզիկական պատրաստության միասնության անհրաժեշտությունը :

Հետազոտությունները բացահայտեցին, որ բժշկական քուլեջի ֆիզիկական դաստիարակության ուսումնական գործընթացում պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության հատուկ մեթոդիկայի և օրագրի կիրառումը նպաստեց կոնկրետ մասնագիտական գործու-



նեությանն անհրաժեշտ կիրառական շարժողական ընդունակությունների ընդլայնմանը:

Հարկ ենք համարում նշել, որ մեր երկրում ուսանողների ֆիզիկական դաստիարակության գործող ծրագրում հաշվի առնելով ապագա մասնագետների աշխատանքի կոնկրետ բնույթը և պայմանները, պրոֆեսիոնալ կիրառական ֆիզիկական պատրաստության բովանդակության և հիմնական պահանջների որոշումը դրված է ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնների վրա: Բայց այդ աշխատանքները բուհերում և քոլեջներում իրագործվում են կամ ոչ լիարժեք, կամ էլ առհասարակ չեն իրագործվում:

Ելնելով այս ամենից և մեր հետազոտությունների արդյունքներից անհրաժեշտություն է առաջանում վերանայելու բժշկական քոլեջների ֆիզիկական դաստիարակության ծրագրի բովանդակությունը՝ ուժեղացնելով ապագա մասնագետների պրոֆեսիոնալ կիրառական ֆիզիկական պատրաստության բաժինը:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Գրական աղբյուրների վերլուծությունը, ընդհանրացումը և սեփական գիտափորձարարական հետազոտությունների արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Մասնագիտական գրականության վերլուծությունը և սոցիոլոգիական հարցումները (80% և ավելի) վկայում են, որ բժշկական քոլեջներում և բուժաշխատողների պատրաստության ներկայիս համակարգում ավելի է կարևորվում պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստությունը՝ առանձնապես նրա իրագործման մեթոդիկան:
2. Բժշկական քոլեջի 16-19 տարեկան ուսանողուհիների մոտ ֆիզիկական զարգացման ցուցանիշները՝ մարմնի հասակը և քաշը, կրծքավանդակի շրջագիծը, թոքերի կենսական տարողությունը, տարիքի հետ ենթարկվում են աննշան փոփոխությունների, մինչդեռ շարժողական պատրաստվածության ցուցանիշները (մկանային ուժը, դիմացկունությունը, արագաշարժությունը) աճում են ավելի ցայտուն, հատկապես 16-17 տարեկանում:  
Մասնակի վերլուծությունները վկայում են նաև, որ ուսանողների շարժողական պատրաստվածության վիճակի վրա էապես ազդում են բնակվելու և ուսումնառության տարածաշրջանային պայմանները (Վանաձոր, Երևան, Գորիս) նյութատեխնիկական բազան և տվյալ ուսումնական հաստատությունում ֆիզիկական դաստիարակության համակարգի դրվածքը:
3. Միջին բժշկական անձնակազմի աշխատակիցների զնահատմամբ մասնագիտական գործունեությունը յուրովի պահանջներ է ներկայացնում մասնագիտական հատուկ շարժողական ընդունակություններին՝ շարժումների ճշգրտությամբ և կոորդինացիային,

մկանային ճիգերը տարբերակելու ունակությամբ, ձեռքերի մատների մանր մոտորիկային, ստորին վերջույթների ստատիկ դիմացկունությամբ, ուշադրության առանձնահատկությունների՝ ծավալ, կայունություն, կենտրոնացվածություն, հուզական լարվածությամբ՝ տրենոր, տեսողական զգայությունների:

4. Պրոֆեսիագրի չափորոշիչների համակարգում, միջին բժշկական անձնակազմի գնահատմամբ, ըստ մասնագիտությունների առանձնաճանրում են մասնագիտական պատրաստության հետևյալ յուրահատուկ ցուցանիշները.

ա. բուժքույրեր և մանկաբարձուհիներ

- մատների և ուսագոտու շարժումների ճշգրտություն,
- շարժումների ճարպկություն և ճշգրտություն, մկանային ճիգերի տարբերակման ունակություն,
- նյարդահոգեկան օպտիմալ լարվածության մակարդակ՝ անսպասելի իրավիճակներում արագ կողմորոշվելու և ճիշտ որոշումներ կայացնելու կարողություն:

բ. դեղագործներ

- մարմնի պահանջվող դիրքի տևական հաղթահարում՝ իրանի առաջ թեքումով,
- ստորին վերջույթների և հենաշարժողական ապարատի ստատիկ լարվածության ու հոգնածության հաղթահարում,
- ձեռքերի մատերի և դաստակների նուրբ կոորդինացիա պահանջող տարբերակված միկրոշարժումների կատարում՝ լարված տեսողության և ուշադրության վերահսկողությամբ:

5. Հետազոտությունների արդյունքները հիմնավորել են բժշկական խմբերի ուսանողուհիների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության բովանդակության հիմնահարցերը.

ա) ֆիզիկական դաստիարակության առարկայական ընտրության հիմքը պետք է լինեն առարկայի պետական ծրագրի պահանջները,

բ) պրոֆեսիոնալ ընդունակությունների և կարողությունների մշակմանը նպաստող հիմնական միջոցներ են ծառայում հատուկ տեղայնացված, ընդհանուր զարգացնող և հատուկ վարժությունները, շարժական խաղերը,

գ) պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության բովանդակությունը պետք է կազմի ֆիզիկական դաստիարակությանը հատկացված ընդհանուր ժամաքանակի 30-40 տոկոսը,

դ) բացահայտվել և մշակվել են առավել արդյունավետ ձևեր, որոնք առաջադրվում են ապագա միջին բուժաշխատողների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության գործընթացում ուսումնական պարապմունքներ, որոնք նախատեսված են հիմնական դասացուցակով, պարապմունքներ բժշկական հիմնարկներում կլինիկական պրակտիկայի ընթացքում, սպորտային-կիրա-

ռական մրցումներ և ինքնուրույն անհատական պարապմունքներ, տնային հաձնարարականներ:

6. Մանկավարժական գիտափորձի արդյունքում ցույց է տրված բժշկական քուլեջի ուսանողուհիների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության արդյունավետությունը՝ ապագա աշխատանքային գործունեությանը նախապատրաստվելու համար: Գիտափորձնական ծրագրի ամբողջ դասընթացն անցած ուսանողուհիները ակնհայտորեն գերազանցել են ստուգողական խմբերի իրենց հասակակիցներին այն հիմնական ցուցանիշներով, որոնք բնութագրում են մասնագիտական պատրաստության կարևոր որակները: Կրկնակի և ավելի անգամ վիճակագրորեն հավաստի տեղաշարժեր են գրանցվել շարժումների արագության, մանր մոտորիկայի, դաստակի մկանների ուժի, թոքերի կենսական տարողության, մկանային ճիզերի տարբերակման ունակության մեջ:
7. Հանդգիչ է այն փաստը, որ միջին բժշկական ուսումնական հաստատություններում պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստությունը պահանջում է ֆիզիկական դաստիարակության նպատակաուղղված մասնագիտացված գործընթաց:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ աշխատանքներում.

1. О прикладности физического воспитания в общеобразовательной школе// Մանկավարժական միտք, Երևան.-2007.-N1-2, էջ 19-22
2. Բժշկական քուլեջների սովորողների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկան. Մեթոդական ձեռնարկ.- Վանաձոր.- «Արմինֆո»,-2009.-68 էջ:
3. Ֆիզիկական դաստիարակության դերը բուժաշխատողների մասնագիտական գործունեության մեջ // Մանկավարժություն . - Երևան 2010.- N3, էջ 40-45
4. Բժշկական քուլեջների ուսանողուհիների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության ցուցանիշների վերլուծությունը // Մանկավարժական միտք, Երևան.-2010.-N3-4, էջ 69-74
5. Բժշկական քուլեջներում պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկայի բնութագիր // Մանկավարժություն . - Երևան 2011.- N2, էջ 22-28

НАЗАРЯН ВАГИНАК РОБЕРТОВИЧ

**ОБОСНОВАНИЕ МЕТОДИКИ ПРОФЕССИОНАЛЬНО-ПРИКЛАДНОЙ ФИЗИЧЕСКОЙ ПОДГОТОВКИ В МЕДИЦИНСКИХ КОЛЛЕДЖАХ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - "Методика преподавания и воспитания"(физическая культура).

Защита диссертации состоится 27 июня 2013г, в 14.00 ч. на заседании специализированного совета 020 ВАК "Педагогика" при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, Ереван, Тигран Мец 17.

**РЕЗЮМЕ**

**АКТУАЛЬНОСТЬ ИССЛЕДОВАНИЯ.** Предметная подготовка учащихся к избранной профессиональной деятельности сегодня является объектом пристального внимания. Здесь важное значение придается профессионально-прикладной физической подготовке. Имеется достаточное количество исследований, направленных на разработку содержания профессионально-прикладной физической подготовки учащихся средних специальных учебных заведений разного профиля. Однако, несмотря на пристальное внимание к проблеме физического воспитания с профессионально-прикладной направленностью, до сих пор остаются неизученными актуальные группы профессий, к числу которых относятся работники среднего медицинского персонала.

**ЦЕЛЬ ИССЛЕДОВАНИЯ.** Совершенствование учебного процесса путем целенаправленного использования средств физического воспитания при подготовке специалистов среднего медицинского персонала в медицинских колледжах.

**ЗАДАЧИ ИССЛЕДОВАНИЯ.** Выдвигаемая цель предусматривала решение определенного круга задач: выявление наиболее значимых двигательных способностей студенток, разработка модельных шкал для оценки их физического состояния, обосновать и апробировать методику профессионально-прикладной физической подготовки студенток, разработать практические рекомендации для специалистов.

**НАУЧНАЯ НОВИЗНА ИССЛЕДОВАНИЯ.** Выявлено основное содержание профессионально-прикладной физической подготовки работников среднего медицинского персонала, сформулированы ее целевые установки и задачи. Показано, что профессионально-прикладная физическая подготовка как специализированный процесс

должна строиться на основе общей физической подготовки. Установлена практическая целесообразность подбора соответствующих средств профессионально-прикладной физической подготовки по ее основным педагогическим задачам.

**ТЕОРЕТИЧЕСКАЯ ЗНАЧИМОСТЬ ИССЛЕДОВАНИЯ.** Результаты исследования дополняют знания в области профессионально-прикладной физической подготовки будущих работников среднего медицинского персонала. Намечены теоретические предпосылки профессионально-прикладной физической подготовки медицинских работников, а также управления взаимосвязью физического воспитания с трудовым профессиональным обучением.

**ПРАКТИЧЕСКАЯ ЗНАЧИМОСТЬ ИССЛЕДОВАНИЯ.** Разработаны нормативы контроля за состоянием профессионально-прикладной физической подготовленности специалистов среднего медицинского персонала, осваивающих профессию медицинских сестер, акушерок и фармацевтов. Апробирована и внедрена в практику соответствующая методика.

**АПРОБАЦИЯ И ВНЕДРЕНИЕ РЕЗУЛЬТАТОВ ИССЛЕДОВАНИЯ.** Основные положения диссертации обсуждены на заседаниях соответствующих кафедр Ванадзорского государственного педагогического института им. О. Туманяна и Армянского государственного института физической культуры. По теме диссертации опубликованы 4 научные статьи и одно методическое пособие. К работе приложены акты о внедрении результатов исследования в педагогическую практику.

**СТРУКТУРА И ОБЪЕМ ДИССЕРТАЦИИ.** Работа состоит из введения, трех глав, выводов и практических рекомендаций. Диссертация изложена на 138 страницах компьютерного текста, вбирает в себя 23 таблиц, 2 рисунка, 5 приложений и 177 литературных источников.

**VAGHINAK ROBERT NAZARYAN**

## **THE JUSTIFICATION OF THE METHODS OF PROFESSIONAL-APPLIED PHYSICAL TRAINING IN THE MEDICAL COLLEGES**

Thesis for the degree of candidate of pedagogical science, specialty 13.00.02 – “Methods of Teaching and Educating” (Physical culture)

The defense of the thesis will take place on June 27 2013 at 14:00 at the meeting of the specialized pedagogical committee 020 НАС “Pedagogy” for granting scientific degrees at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan (address: Yerevan 0010, Tigran Mets str. 17 )

## SUMMARY

**THE RELEVANCE OF THE RESEARCH.** The training of professional practice of students becomes worthwhile for the specialists. The professional-applied physical training is of great importance here. There are numerous researches which are made for perfection of the contents of students' professional-applied physical training of different sphere's middle vocational educational institutions. However, in spite of the attentiveness of the problem of the physical training made for professional-applied trend, separate actual groups of professions remain uninvestigated till nowadays, among them are professions of middle vocational medical personnel's.

**THE AIM OF THE RESEARCH.** The improvement of educational pedagogical process by directed means of physical education in training the specialists of a certain sphere in medical colleges.

**THE OBJECTIVES OF THE RESEARCH.** The aim of here presented work envisages solving of some certain problems of which it is important to correct the notions about the factors which cause the specific demands of concrete specialization and human's physical preparation and to reveal the most appropriate means of the future middle vocational medical personnel. Some partial issues have been described in the corresponding chapters of the thesis.

**THE SCIENTIFIC NOVELTY OF THE RESEARCH.** The main contents of the professional-applied physical training of the collaborators of the middle vocational medical personnel is disclosed, the purposeful orientations, issues and contests are formulated. Here is shown that professional-applied physical training as a specialized pedagogical process, must found on the basis of physical training, the practical appropriateness of choosing corresponding ways is determined for professional-applied physical training according to its basic pedagogical issues.

**THE THEORETICAL VALUE OF THE RESEARCH.** The results of the researches fill up knowledge of future middle vocational medical personnel in the sphere of the professional-applied physical training. Here the theoretical prerequisites of professional-applied physical training are mentioned for the medical collaborators. Here the intercommunication of physical training is also mentioned by working professional teaching.

**THE PRACTICAL VALUE OF THE RESEARCH.** In this part standards for controlling professional-applied physical training condition of collaborators of middle vocational medical personnel, nurses, midwives, pharmacists are worked out. Experimented and corresponding methods are put in teaching process.

**THE EXAMINATION AND INVESTMENT OF THE RESULTS OF THE RESEARCH.** The main propositions and results of the research have been discussed during the corresponding department sessions of Vanadzor's State Pedagogical Institute and Armenian State Physical Culture Institute. Concerning to the main issues four scientific articles and a methodical hand-

book have been published. There are also two contribution reports about the results of the scientific research in the pedagogical practice.

**THE STRUCTURE AND THE VOLUME OF THE THESIS.** The thesis consists of an introduction, three chapters, a conclusion, practical suggestions. It is stayed on the pages of 138 of a computer text. The thesis includes 23 tables, 2 pictures, a list of 177 bibliography names, 5 appendixes.